ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

ՀՀ 0025 ԵՐԵՎԱՆ, Ալեք Մանուկյան 5, Հեռ. 37410 570-970, Ֆաքս 37412 570-007, Էլ-փոստ info@armradio.am

www.armradio.am

30/11/2022

N 12/22 01-86

Լավենդեր ՍՊԸ-ի

տնօրեն Ա. Շահզադյանին

Հարգելի Ա. Շահզադյան

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ կարիքների համար տնտեսական նյութերի ձեռք բերման նպատակով 2022 թ. հունվարի 12-ին հրապարակված ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-22/06 ընթացակարգի անդյունքում <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ի և <<Լավենդեր>> ՍՊԸ-ի միջև 14.02.2022թ կնքվել է ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-22/06-5 պայմանագիր 122997,6 (հարյուր քսաներկու հազար ինը հարյուր իննսունյոթ դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որի հիման վրա Ձեր կազմակերպությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել տնտեսական նյութերը, սակայն սահմանված ժամկետում չի մատակարարվել, ուստի հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2,1 կետը, այն է՝ գնորդն իրավունք ունի՝

2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը, եթե էականորեն խախտվել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագրի էական խախտում է համարվում , եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

<<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ն միակողմանի լուծում է <<Լավենդեր>> ՍՊԸ-ի հետ 14.02.2022թ. կնքած ՀՀՌ-ԷԱՃԱՊՁԲ-22/06-5 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով <<Լավենդեր>> ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Սույնով տեղեկացնում ենք նաև, որ <<Լավենդեր>> ՍՊԸ-ի կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայցվեն ընկերությանը սպասարկող բանկ սահմանված գումարները <<Հայաստանի հանրային ռադիոընկերություն>> ՓԲԸ-ի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Գ. Խումարյան